ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի պատվիրակության այցը Ֆրանսիայի Հանրապետության Բանդոլ քաղաք

2017 թվականի մարտի 24-ից 28-ը ՀՀ Վայոց ձորի պատվիրակությունը պաշտոնական այցով գտնվում էր Ֆրանսիայի Հանրապետության Բանդոլ քաղաքում: Պատվիրակության կազմում ընդգրկված էին ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական Վասիլ Ասլանյանը և ՀՀ Վայոց ձորի Արենի համայնքի ղեկավար Ռաֆֆի Խաչատրյանը:

Այցի նպատակը ՀՀ Վայոց ձորի Արենի համայնքի և Ֆրանսիայի Պրովանս-Ալպ-Կոդ դ'Ազյուր շրջանի Վար դեպարտամենտի Բանդոլ քաղաքի միջև քույրացման համաձայնագրի ստորագրումն էր և Բանդոլ քաղաքի գլխավոր պուրակում հայկական խաչքարի տեղադրումը:

Այցի ողջ ընթացքում հայկական պատվիրակությանն ուղեկցում էին Բանդոլի քաղաքապետ Ժան Պոլ Ժոզեֆը, Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Վիգեն Չիտեչյանը, հյուպատոս Սամվել Լալայանը:

Մարտի 25-ին Բանդոլ քաղաքի գլխավոր պուրակում տեղի ունեցավ հայկական խաչքարի բացման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին Բանդոլի քաղաքապետ Ժան Պոլ Ժոզեֆը, Ֆրանսիայում ՀՀ դեսպան Վիգեն Չիտեչյանը, հյուպատոս Սամվել Լալայանը, հայ համայնքի ներկայացուցիչներ և պաշտոնատար այլ անձիք: Խաչքարի բացման արարողությանը հաջորդեց Արենի և Բանդոլ քաղաքների բարեկամության համաձայնագրի ստորագրման հանդիսավոր արարողությունը: Ելույթներով հանդես եկան Բանդոլի քաղաքապետ Ժան Պոլ Ժոզեֆը և Արնենիի համայնքապետ Ռաֆֆի Խաչատրյանը:

Հայկական պատիրակության անդամները հանդիպում ունեցան Բանդոլի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Այցի շրջանակներում հայկական պատվիրակության անդամներն այցելեցին խաղողի այգիներ, ֆերմարային տնտեսություններ, գինեգործարաններ:

Պաշտոնական այցի ընթացքում քննարկվեցին զբոսաշրջության, գինեգործության, առևտրատնտեսական, մշակութային և այլ ոլորտներում համագործակցության հաստատման և զարգացման հետ կապված հարցեր:

Հայկական պատվիրակության այցը Ֆրանսիա ավարտվեց մարտի 28-ին: